Պարույր Սևակ

Իմ կտակը 2

Ա՛խ, այդ բիճերը,
Որ ծեր են ծնվել...
Զավա՛կըս,
Հիմա ես նրանց առաջ
Նույնիսկ, ազնի՛վ խոսք, ինձ վատ եմ զգում:
Ինձ վատ եմ զգում,
Որ չարացել եմ ես նրանց վրա,
Որ թշնամի եմ համարել նույնիսկ,
Մինչևիսկ ատել:
Սխալվել եմ ես:
Հիմա նրանցից
Շնորհակալ եմ, անկեղծ եմ ասում:
Շնորհակա՛լ եմ:
Չէ՞ որ ինձ համար
Լավ է, որ նրանք կան ու կլինեն:
Չէ՞ որ հենց նրանց ծերության ֆոնին
Զահելությունն է շեշտվում-ընդգծվում:
Լավ է, որ կյանքում հաղթել են նրանք:
Լավ է, նույնքան էլ արդարացի է:
Ախար ամեն մեկն ունի իրավունք
Գոնե մի՛ անգամ իր կյանքում հաղթելու:

Հերթը նրանցն է -
Թող հաղթեն այսօր,
Բայց չէ՞ որ վաղը դու ես հաղթելու
Կամ քեզ նմանը:
Եվ ճիշտ են, ճիշտ են բոլո՛րն աշխարհում -
Քսո՛ւն, տխմա՛րը, խե՛ղճը, սրիկա՛ն:
Կյանքում ամե՛ն մարդ,
Կյանքում ամե՛ն ինչ
Ունի իրավունք
Արդարացնելու իր գոյությունը:
Եվ որտեղի՞ց բերք,
Թե պարարտանյութ չպիտի լինի:
Ի՞նչ ապաքինում,
Թե չի եղել ցավ,
Թե ախտ չի եղել:
Ի՞նչ վերածնունդ,
Եթե չի եղել մահացու դադար:
Երջանկությունն էլ չէ՞ որ հենց այն է,
Որ չկար երեկ և այսօր հասավ...

19.XII.1959թ.
Թիֆլիս